# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

գ. Շիրակամուտ

№—Ե -03/106

«24» 03. 2020թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ներկայացնում եմ Շիրակամուտ համայնքի ղեկավարի թիվ 30-Ա , 31-Ա և 32-Ա որոշումները :

Առդիր 5 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

✉ Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզ, Շիրակամուտ համայնք

☎ 0255 6-15-01


## Ո Ր Ո Շ Ու Մ

,, 17 " մարտի 2020 թվականի N30-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ,գ / ենթակետով և 48-րդ կետով, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով ,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Շիրակամուտ համայնքի թիվ 8 փողոցի վրա գտնվող 06-087-007-016 կադաստրային ծածկագրով 0,144 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի և դրա վրա գտնվող փողոց թիվ 8 ,տուն թիվ 16 բնակելի տան հասցեն փոխել ,, գ. Շիրակամուտ, փողոց թիվ 8 , տուն թիվ 12" հասցեով:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Համայնքի ղեկավար Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հասցե գ. Շիրակամուտ
Հեռախոս 0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

«24» մարտի 2020թ. թիվ 31-Ա

Անշարժ գույքի հասցեավորման մասին

Ղեկավարվելով Հայաստանի հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի գ/ ենթակետով և 48-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ եմ

1. Շիրակամուտ համայնքի 3-րդ փողոցի վրա գտնվող 05-087-0025-008 կադաստրային ծածկագրով 0.127հա մակերեսով տնամերձ հողամասի վրա գտնվող բնակելի տանը տրամադրել «գ. Շիրակամուտ, 3-րդ փողոց, տուն թիվ 10» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ Ա. Երանոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հասցե գ. Շիրակամուտ
Հեռախոս 0255-6-15-01

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մարտի 2020թ. թիվ 32

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ ԱՌԱՋԱՑՆԵԼՈՒ ՆԵՐՈՒԺ ՈՒՆԵՑՈՂ» ԴԵՊՔԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՎԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՄԱՆ, ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ կետերով, 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 4-րդ կետերով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «ե», «զ» և «է» կետերով, ՀՀ Լոռու մարզպետի 16 մարտի 2020թ. թիվ 324-Ա որոշմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետի 15.03.2020թ. թիվ 17/280 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր հիվանդության «Հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ առաջացնելու ներուժ ունեցող» դեպքի արձագանքմամբ պայմանավորված ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպման նպատակով Լոռու մարզի Շիրակամուտ համայնքից ձևավորել կորոնավիրուսի վարակի տարածման, կանխարգելման և արձագանքման համայնքային խումբ (այսուհետ՝ խումբ):
2. Հաստատել խմբի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
3. Խմբին՝

- իրականացնել ստեղծված իրավիճակի վերլուծության, համարժեք արձագանքման և ՀՀԼոռու մարզի Շիրակամուտ համայնքում հնարավոր համաճարակ առաջացնող գործոնների կանխման ու հետևանքների վերացման աշխատանքներ,
- նախապատրաստել հայտեր՝ արձագանքող ուժերի, վարակազերծող խմբերի համար անհատական պաշտպանության միջոցների և վարակազերծման միջոցների ձեռք բերման համար:

- իրականացնել բնակչության շրջանում լայնածավալ բացատրական և իրազեկման աշխատանքներ՝ տեղական ԶԼՄ-երի, սոցիալական ցանցերի և թերթիկների միջոցով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում համայնքային խմբի անդամների իրազեկման պահից:

Շիրակամուտ համայնքի ղեկավար Ա. Երանոսյան

Հավելված 1.
ՀՀ Լոռու Շիրակամուտ համայնքի
ղեկավարի
2020թ. մարտի 24-ի
թիվ32 որոշման

ԿԱԶՄ
ՀՀԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Ա. Երանոսյան - խմբի պետ, Շիրակամուտ համայնքի ղեկավար

Վ. Պալյան - խմբի պետի տեղակալ,համայնքի ղեկավարի տեղակալ

Խմբի անդամներ.

Հ. Իգիթխանյան – համայնքապետարանի գլխավոր մասնագետ

Հ. Երանոսյան - համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Ջ. Սանդրոսյան - համայնքապետարանի առաջատար մասնագետ

Ա. Պապոյան - համայնքի ավագանու անդամ

Ա. Մանուկյան- բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու

Գ. Նալյան- փոստային կապի պատասխանատու

Մ. Նալյան- համայնքային անասնաբույժ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան